Աջակցություն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը. Կարգավորման կառավարում / Ստանդարտ ծախսերի մոդել

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	տնտեսական
Տևողություն՝	35 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	նոյեմբեր 2009- Հոկտեմբեր 2012
Բյուջե՝	1 մլն եվրո

Շահառու մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ԵՄ անդամ պետության գործընկեր՝
HAUS, Պետական կառավարման Ֆիննական ինստիտուտ ՍՊԸ

Ծրագրի նկարագիր

Նպատակ Մշակել կարգավորման կառավարման ծրագիր՝ օգտագործելով Ստանդարտ ծախսերի մոդել մեթոդոլոգիան որպես մեկ գործիք՝ մշակելու պարզեցված ու թափանցիկ վարչական գործնական քայլեր, որոնք քչացնում են վարչական բեռը՝ այդպիսով բարձրացնելով ներդրողների համար Հայաստանի գրավչությունը:

Բաղադրիչներ

Բաղադրիչ I. Ավելի լայն կարգավորման կառավարման միջամտությունների համար քաղաքականության ու ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորում,

Բաղադրիչ II. Ստանդարտ ծախսերի մոդելի իրականացման համար կառուցվածքների մշակում,

Բաղադրիչ III. Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում;

Բաղադրիչ IV. Պիլոտային Ստանդարտ ծախսերի մոդելի հետազոտության (հետազոտությունների) ամփոփում,

Բաղադրիչ V. Արտաքին հաղորդակցություն ու շահառուների սենսիթիզացիա

Ձեռք բերված արդյունքներ.

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են.

ա)Հայաստանում նորմատիվ իրավական ակտերի Կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) համակարգի բարելավման հայեցակարգն ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերին, ներդրվել են առաջին ԿԱԳ ցանցն ու համակարգը; մշակվել է Հայաստանի օրենսդրական ակտերի, դրանց համապատասխան վերանայված տարբերակների ու դիտողությունների ցուցակ,

բ)Ձևավորվել է Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող ԿԱԳ թիմը, ինչպես նաև 6 կառավարման մարմիններից բաղկացած ցանցը,
գ)Ներգրավված մարմինների պաշտոնյաները /մասնագետները վերապատրաստվել են; մշակվել ու Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել է քաղաքացիական ծառայողների համար ակադեմիական ԿԱԳ վերապատրաստման ծրագիրը,
դ)Իրականացվել են երկու Ստանդարտ ծախսերի մոդելի ուսումնասիրություններ շահառու պետական մարմինների մասնակցությամբ,
ե)Շուրջ 300 օրենսդրական ակտեր են ուսումնասիրվել ու համապատասխան առաջարկությունները տրամադրվել են համապատասխան նախաձեռնող մարմիններին։

Հավելյալ տեղեկատվություն՝

Հայաստանի քաղաքացիական ծառայողների համար ԿԱԳ ձեռնարկ